Երկրորդ անգամ եասաղ արար զըստակն ցած չանցանել, և զուռուշն Ճ ընդ ասլանլուին և Է տրամ եւ Ձ տրամ չառնէին: Եւ ի հանելն զկեօմրուկճին բազում միրի մնայր պարտք նմա և հախս լինէր վասն խարաճին եւ կամէր ժողովել. տէֆտէրտարն իւրն հնարեցաւ եւ մարդ եդ ի վերայ զի զժողովեալ խարաճն ինքն առցէ, Յուլիսի Ժ. եւ ժողովէին խոշոր ըստակ եւ ասլանլու Ճ առնէին եւ զօլաթայ ԿԵ:

Զղատին փոխեցին ղազլէսքէր արարին եւ Գչի ԺԵ որ օր արաֆա՝ զիմամն եկեալ ի Մուրթազէ սպանին և զսարայն կողոպտեալ բերին յարքունիս, վասն որոյ և Ե Զ փաշա զօրօք առաքեցին ի վերայ նորա առ ի չքել:

...(*) Եւ սուպաշին առնէր հրաման և գրէր զամենայն տունս Հայոց, որք ժամանակաւ առեալ էին ի Տաճկաց, և երթայր ի թէֆթիշ և հանէր, վասն որոյ և առեալ կաշառս ապա թոյլ տայր. եթէ յայրեալ տեղիսն զայս առնէր և թէ՛ ի Սուլումանաստր: Եւ զայր ոմն սպանեալ տեսեալ ի յՈւսկիւտար և կալան զսահմանացն արս եթէ Ո՛վ սպան զայրն գտջիք. և ոչ ոք գիտաց: Եւ սուպաշին կալեալ զմէյխանէճիս՝ ասէ. Դուք ասացէք փաշային՝ եթէ զսպանողս գիտեմք, եւ կապեցէք[1]) զի ռոճիկս պարգեւեսցէ ձեզ. եւ զնոյն յորժամ ասացին յանգիման փաշային, զամենեսեան ի քիւրէկ հրամայեաց թէ Սուտ վկայք էք: Զտուն ումեմն հրէի եալին կոխեցին ի Գչի եւ սպանին զկին մի և այր, և աւար հարին զտունն, և ընդ առաւօտն տեսանէին զայն լուր լինէր բռնակալաց (Բէրէ):

1) կպցբ.

(*) Թուղթեր ինկած: